"Տեղական ինքնակառավարման" մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի լիազորությունները պետական լիազորված մարմնի ներկայացմամբ վաղաժամկետ դադարեցնում է ՀՀ կառավարությունը, եթե՝

- նա հրաժարական է տվել,
- դադարեցվել է նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
- նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- նա անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում,
- նա մահացել է:

Նշված դեպքերում համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների դադարման մասին արձանագրություն, որը համապատասխան մարզպետի միջոցով ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Կառավարությունը համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է նաեւ, եթե տվյալ համայնքը, օրենքով սահմանված կարգով, վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր:

Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 17-րդ և 72-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, համապատասխանաբար՝ համայնքի ավագանու և մարզպետի նախաձեռնությամբ, ՀՀ կառավարությունը կարող է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ համայնքի ղեկավարի պաշտոնանկության հիմքերի մասին եզրակացության առկայության դեպքում, պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին: